ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 3, 1952 Общественные науки

ԼՐԱՏՈՒ

# ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻՍ, ՆՎԻՐՎԱԾ Ն. Վ. ԳՈԳՈԼԻ ՄԱՀՎԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

*Փետրվարի 29-ին և մարտի 1-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի կազմակերպած հոբելյանական գիտական սեսիան, նվիրված ռուս մեծ գրող Ն. Վ. Գոգոլի մահվան 100-ամյակին։ Բացման խոսքով հանդես եկավ պրոֆ. Մ. Մկրյանը, որից հետո լսվեցին հետևյալ զեկուցումները. Ն. Վ. Գոգոլի տիպերի օգտագործումը Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի երկերում (զեկ. ֆիլ. դիտ. թեկնածու Է. Թոփչյան), Ն. Վ. Գոգոլը և հայ գրականությունը (զեկ. ֆիլ. դիտ. թեկնածու Գ. Հովնան), Ն. Վ. Գոգոլի ստեղծագործությունը ռուս ռևոլուցիոն-դեմոկրատների դնահատությամբ (զեկ. պրոֆ. Հ. Մելիքյան), Ն. Վ. Գոգոլը և մեր օրերը (զեկ. ֆիլ. դիտ. թեկնածու Ս. Սարյան)։*

*Սեսիայում կարդացված զեկուցումների մի մասը կտպագրվի «Տեղեկագրի» առաջիկա համարներում։*

# ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

*Փետրվարի 26 – 28-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Ընդհանուր ժողովը։ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիայի իսկական անդամ Վ. Հ. Համբարձումյանը, բաց անելով ժողովը, ասաց.*

*Ընկերներ.*

*Գիտությունների ակադեմիայի Ընդհանուր ժողովի ներկա նստաշրջանը նվիրվում է մեր ակադեմիայի 1951 թվականի աշխատանքների արդյունքները ի մի բերելու և քննելու համար։*

*Կոմունիզմի մեծ կառուցումների իրագործումը պահանջել է սովետական գիտնականներից ակտիվ մասնակցություն ցուցաբերել մի շարք կարևոր գիտա-տեխնիկական հարցերի լուծման մեջ։ Մեր ակադեմիայի մի շարք գիտա-հետազոտական հիմնարկներ հաջող աշխատանք են կատարել այդ ուղղությամբ և զգալի օգնություն են ցույց տվել Ստալինգրադյան ու Կույբիշևյան հիդրոհանգույցների շինարարությանը։*

*1951 թվականի ընթացքում էլ ավելի մեծացել է Գիտությունների ակադեմիայի դերը Սովետական Հայաստանի արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման գործում։*

*Սակայն պետք է ասել, որ այնպիսի կարևորագույն խնդիրներում, ինչպիսին են մետալուրգիայի պրոբլեմները արդյունաբերության համար և ցորենի պրոբլեմը գյուղատնտեսության համար, մենք դեռևս հետ ենք մնում կյանքի պահանջներից։ Գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքը, ինչպես նաև Տեխնիկական գիտությունների նորակազմ բաժանմունքը պետք է ավելի մոբիլիզացնեն իրենց ուժերն այդ խնդիրները լուծելու համար։*

*Խոշոր խնդիրներ են դրված այսօր Հասարակական գիտությունների բաժանմունքի առաջ, մանավանդ տնտեսագիտության, լեզվաբանության և պատմության բնագավառներում։*

*Բիոլոգիական գիտությունների բաժանմունքի հիմնարկներն ավելի արագ պետք է առաջ մղեն Ի. Պ. Պավլովի ուսմունքի զարգացման գործը։*

*Մեր ամբողջ գիտական աշխատանքում հսկայական է քննադատության և ինքնաքննադատության դերը։*

Մասնավորապես խոշոր նշանակություն ունի գիտական հարցերի լայն և ազատ քննարկումը բանավոր դիսկուսիաների և մամուլի միջոցով։

1951 թվականի ընթացքում կատարվել են այդ ուղղությամբ որոշ քայլեր։ Այժմ հարկավոր է ավելի համարձակորեն քննության առարկա դարձնել մեր գիտության կարևորագույն խնդիրները, այդ աշխատանքին մասնակցելու հրավիրելով Մոսկվայի և առհասարակ եղբայրական ռեսպուբլիկաների մասնագետներին։

Զարգացնելով քննադատությունը և ինքնաքննադատությունը, մենք կհասնենք նոր նվաճումների գիտական աշխատանքում։

Պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանի բացման խոսքից հետո Ընդհանուր ժողովը լսեց ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ Գ. Ա. Ղափանցյանի զեկուցումը «Լեզվի զարգացման ներքին օրինաչափությունները» թեմայով, ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ Մ. Գ. Ներսիսյանի զեկուցումը «Ամերիկյան իմպերիալիզմի ներթափանցումը Մերձավոր Արևելքի երկրները» թեմայով, պատմ. գիտ. թեկնածու Կ. Գ. Ղաֆադարյանի զեկուցումը «Գվինի հնագիտական պեղումների արդյունքները» թեմայով, ֆիզ.-մաթ. գիտ. դոկտոր Ս. Ն. Մերգելյանի զեկուցումը «Մոտավորությունների տեսության որոշ հարցերի մասին» թեմայով, երկրա-հանքարան. գիտ. թեկնածու Գ. Պ. Քաղդասարյանի զեկուցումը «ՀՍՍՌ ԳԱ Ստալինդրաղյան երկրաբանական էքսպեդիցիայի հետազոտությունների արդյունքները 1951 թվականին» թեմայով, ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ Լ. Ա. Հովհաննիսյանի զեկուցումը «Նորը սիրտ-անոթային ներոդների ուսմունքի մեջ՝ Ի. Պ. Պավլովի ուսմունքի լույսի տակ» թեմայով, ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ Հ. Խ. Բունիաթյանի զեկուցումը «Պայմանական ներքին արգելակման ազդեցությունը բիոբիմիական մի քանի պրոցեսների վրա» թեմայով, բիոլ. գիտ. դոկտոր Ա. Մ. Ալեքսանյանի զեկուցումը «Նյարդային համակարգության պլաստիկականության մի քանի հարցերը» թեմայով, ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ Վ. Հ. Գուլբանյանի զեկուցումը «Օրենների արժեքավոր գծեր ՀՍՍՌ լեռնային շրջանների համար» թեմայով, ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ Գ. Ս. Դավթյանի զեկուցումը «Ագրոքիմիական հետազոտություններ ՀՍՍՌ-ում ցորենի բերքատվության բարձրացման ուղղությամբ» թեմայով։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի 1951 թվականի գործունեության և 1952 թվականի աշխատանքների պլանի մասին հաշվետու զեկուցմամբ հանդես եկավ ՀՍՍՌ ԳԱ պրեզիդենտ, Ակադեմիայի իսկական անդամ Վ. Հ. Համբարձումյանը։

Ընդհանուր ժողովը, լսելով ՀՍՍՌ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիայի իսկական անդամ Վ. Հ. Համբարձումյանի զեկուցումը Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի 1951 թ. գործունեության և 1952 թ. աշխատանքների մասին, որոշեց.

Հաստատել ՀՍՍՌ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիայի իսկական անդամ Վ. Հ. Համբարձումյանի զեկուցումը Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի 1951 թ. գործունեության և 1952 թ. աշխատանքների պլանի մասին։

Ընդհանուր ժողովն զբաղվեց նաև Ակադեմիայի պատվավոր անդամների ընտրության, ֆիզիկո-մաթեմատիկական գիտությունների բաժանմունքի և Տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարների ընտրության հարցերով։

Ընդհանուր ժողովը փակ քվեարկությամբ, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պատվավոր անդամներ ընտրեց՝

Ակադեմիկոս Իվան Մատվեևիչ Վինոգրադովին (մասնագիտությունը՝ մաթեմատիկա)։

Ակադեմիկոս Ալեքսանդր Նիկոլաևիչ Նեսմեյանովին (մասնագիտությունը՝ քիմիա)։

Ընդհանուր ժողովը, փակ քվեարկությամբ Ֆիզիկո-մաթեմատիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար ընտրեց ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ Արտաշես Լիպարիտի Շահինյանին և Տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար՝ ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ Նադուշ Թաչատուրի Հարությունյանին։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Ընդհանուր ժողովի նիստերին մասնակցում էին Հայկական ՍՍՌ ԳԱ հիմնարկների ղեկավար ու գիտական աշխատակիցներ, սովետական ինտելիգենցիայի և մամուլի ներկայացուցիչներ։

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ